

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ասլանյան Սերգեյ Գագիկի

Տարածքային կազմավորումների կայուն և համաչափ զարգացման
հիմնախնդիրները (ՀՀ նյութերով)

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Յուրի Միքայելի Սուվարյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Պետրոսյան Մարտիրոս Երվանդի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Չոբանյան Մարտուն Խաչատուրի

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի մարտի 30-ին, ժամը 15:30-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան փ., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է՝ 2017 թ. փետրվարի 28-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ս.Ա.Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև մեծ և խորացող անհամամասնություններն ուղղակիորեն և անուղղակիորեն բացասաբար են ազդում յուրաքանչյուր երկրի ընդհանուր տնտեսական զարգացման վրա: Դրանք հաճախ դրսևորվում են տարածքներում գործազրկության բարձր մակարդակով, տնտեսապես հետամնաց տարածքների առաջացմամբ, միգրացիոն անցանկալի հոսքերով:

Հայաստանի Հանրապետության աշխարհագրական և բնակլիմայական պայմանների բազմազանությունը, բնառեսուրսային և արտադրական ներուժների տարբերություններն ի սկզբանե կանխորոշել են բնակավայրերի տեղաբաշխման, արտադրական գերակա ճյուղերի և տրանսպորտային ուղիների ձևավորման ու զարգացման, սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման հնարավորությունները: Դրա հետ միասին, ներդրումային հոսքերի անհավասարաչափ բաշխումը պայմանավորել են մարզերի ու համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհամամասնությունները: Ուստի, ներկայումս մեր հանրապետության համար առանձնահատուկ կարևորություն է ստանում տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծումը, որը երկարաժամկետ հեռանկարում կապահովի ցանկալի արդյունք, եթե այն դրվի կայուն զարգացման հիմքերի վրա:

Չնայած տարածքային զարգացման վերաբերյալ ուսումնասիրություններին և տարածքային քաղաքականությանն առնչվող բազմաթիվ մոտեցումներին, դեռևս տարածքային կայուն և համաչափ զարգացման տեսական և գործնական կիրառման շատ հարցեր քննարկման փուլում են, առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Գիտական հրապարկումներում թերևս բացակայում է սոցիալ-տնտեսական համակարգի կայուն զարգացման հասկացության վերաբերյալ միասնական ընդհանուր տեսակետը, սահմանված չեն տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի կայունության չափանիշները և նրա գնահատման մեթոդաբանությունը, բացահայտված չեն տարածքային մակարդակի համակարգերի կայուն զարգացման առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ

նշանակություն ունի տարածքային կազմավորումների միջև առկա սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների կրճատման հիմնախնդիրների լուծումը՝ տարածաշրջանների շահերի պահպանման, երկրի արդյունավետ վարչատարածքային կառուցվածքի ձևավորման հիման վրա: Խիստ կարևոր ու արդիական է գիտական հիմնավորմամբ սահմանել տարածաշրջանների կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների համահարթեցման սկզբունքներն ու հիմնական մոտեցումները և գիտականորեն հիմնավորել դրանք:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման ուղղությունների որոնումն էլ կանխորոշել է սույն ատենախոսության թեմայի ընտրությունը, հիմնավորել նրա արդիականությունը, պայմանավորել ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքային կազմավորումների սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն և համաչափ զարգացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց գործնական լուծման ուղիների և մոտեցումների առաջադրումը՝ տեսական-մեթոդական հիմնավորմամբ: Վերոնշյալ նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Հստակեցնել «տարածք», «տարածքային կազմավորում» և «համաչափ տարածքային զարգացում» հասկացությունների բովանդակությունը:
- Բացահայտել և դասակարգել տարածքային քաղաքականության էությունը, իրականացման ձևերը, սկզբունքներն ու մեթոդները:
- Հիմնավորել տարածաշրջանների կայուն և համաչափ զարգացման գործում պետական տարածքային քաղաքականության նշանակությունը, բացահայտել սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների համահարթեցման և կայուն զարգացման պետական տարածքային քաղաքականության էությունը, ուղղությունները և գործիքները:
- Ուսումնասիրել տարածաշրջանների կայուն և համաչափ զարգացման միջազգային փորձը և դրա կիրառելիության հնարավորությունները ՀՀ-ում:
- Վերլուծել և գնահատել ՀՀ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման անհամամասնություններն ու մասշտաբները, բացահայտել

առաջացման պատճառները, ներկայացնել առաջարկություններ դրանց հաղթահարման նպատակով:

- Ուսումնասիրել սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն զարգացման տեսամեթոդաբանական հիմունքները, տարածքային կայուն զարգացման էությունն ու առանձնահատկությունները, բացահայտել ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները:
- Առաջադրել ՀՀ տարածքային կազմավորումների սոցիալ-տնտեսական անհամաչափությունների հաղթահարման և կայուն զարգացման մոտեցումներ:
- Կարևորելով տարածքային կայուն և համաչափ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում տեղական ինքնակառավարման ինստիտուտի դերը՝ մշակել վերջինիս ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիներ:
- Տարածքային կայուն և համաչափ զարգացման կառավարման համակարգի կատարելագործման համատեքստում առաջարկել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կայուն և համաչափ զարգացման ռազմավարության մշակման և դրա իրականացման կառուցակարգ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ տարածքային կազմավորումների համակարգն է, դրա սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացները, իսկ առարկան՝ տարածքային կայուն և համաչափ զարգացման ապահովման սոցիալ-տնտեսական հարաբերությունները, որոնք ծագում են տարածքային զարգացման քաղաքականության իրականացման գործընթացում:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության տեսական հիմքն են տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման ոլորտում հայրենական և արտասահմանյան գիտնականների կատարած հետազոտությունները, հրապարակումները: Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել այնպիսի մեթոդաբանական մոտեցումներ, ինչպիսիք են համակարգային և վիճակագրական վերլուծությունը, տեսության և գործնականի միասնությունը: Վերլուծության տեղեկատվական հիմնական աղբյուրները ՀՀ կառավարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, հայաստանյան և միջազգային կազմակերպությունների հրապարակած տվյալներն են, վիճակագրական և վերլուծական նյութերը:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության հիմնական արդյունքը ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն զարգացման և անհամաչափությունների հաղթահարման գործընթացի ձևավորման ու իրականացման տեսական հիմունքների և գործնական կիրառման մոտեցումների մշակումն է, որոնցից առավել էական գիտական նորույթներից են հետևյալները.

- Հստակեցվել և սահմանվել են տարածքային զարգացման անհամաչափության բացահայտման չափանիշները և դրանց համապատասխան ներկայացվել է սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունները բնութագրող ցուցանիշների համակարգ:
- Կարևորելով տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման գործում տեղական ինքնակառավարման դերը՝ առաջարկվել է վարչատարածքային բարեփոխումների նոր հայեցակարգ՝ ուղղված համայնքների ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը:
- Հիմնավորելով տարածաշրջանների զարգացման և մրցունակության բարձրացման գործում կլաստերների դերը՝ մշակվել են ՀՀ տարածաշրջաններում կլաստերների ձևավորման և զարգացման գործընթացի կազմակերպական, տնտեսական հիմունքները և փուլերը:
- Մշակվել է տարածքային կազմավորումների սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության մշակման, ընդունման և իրականացման ապահովման ողջ գործընթացը՝ մեկնարկային պայմանների վերլուծությունից մինչև իրականացման վերահսկողության կազմակերպումն ու գնահատումը, ներառելով անկախ վերլուծական կազմակերպությունների կողմից գործընթացների մշտադիտարկումը:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տարածքային զարգացման քաղաքականության ձևավորման, տարածաշրջանների զարգացման մակարդակների անհամաչափությունների հաղթահարման և կայուն զարգացման

ապահովմանն ուղղված միջոցառումների մշակման համար: Ատենախոսությունում արծարծված հիմնական դրույթները, տեսամեթոդական և գործնական որոշ արդյունքները կարող են օգտակար լինել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներին և հետազոտողներին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացվել և քննարկվել են 2015 թ. «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովում, ՀՊՏՀ կառավարման ամբիոնի նիստում, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչությունում: Ատենախոսության որոշ դրույթներ օգտագործվել են Երևանի 2017թ. զարգացման ծրագրում: Կատարված հետազոտության արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, 134 անուն օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև 4 հավելվածից: Ատենախոսության հիմնական բովանդակությունը շարադրված է տպագիր 168 էջում և ներառում է 5 գծապատկեր և 20 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ **«Տարածքային կազմավորումների կայուն և համաչափ զարգացման տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացվել է տարածքային քաղաքականության էությունը, խնդիրները, հիմնավորվել և հստակեցվել են տարածաշրջանների կայուն և համաչափ զարգացման գործում պետական տարածքային քաղաքականության նշանակությունը, իրականացման ձևերն ու սկզբունքները, առաջադրվել են տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի

կայուն և համաչափ զարգացման բացահայտման չափանիշները և դրանց ձևավորման վրա ազդող գործոնների հիմնական խմբերը, ուսումնասիրվել է տարածքային զարգացման կառավարման միջազգային փորձը:

Ատենախոսությունում հիմնավորված է այն տեսակետը, որ օբյեկտիվ նախադրյալներն ու տնտեսական գործունեությունն են կանխորոշում տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամամասնությունները, ինչն էլ հանգեցնում է տարածքային կազմավորումների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների շերտավորմանը:

Տարածքային անհամաչափությունների հաղթահարման խնդրի լուծման նպատակով աշխատանքում բացահայտվել են այն չափանիշներն ու ցուցանիշները, որոնք բնութագրում են տարածքային կազմավորումների սոցիալ-տնտեսական անհամամասնությունների չափերը:

Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն զարգացման ապահովման մոդելին անցնելու հիմնախնդիրը դարձել է ամենահրատապներից մեկն, ինչն էլ պայմանավորել է դրա նկատմամբ մեծ հետաքրքրությունն ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտնականների կողմից:

Ուսումնասիրելով կայուն զարգացմանն առնչվող գրականությունը՝ աշխատանքում առաջ է քաշվում այն գաղափարը, որ կայուն զարգացումը պետք է իրականացվի տարածքային միավորումներում, քանի որ վերջիններս բնութագրվում են համալիրությամբ, ամբողջականությամբ, մասնագիտացմամբ և կառավարելիությամբ, ձևավորվել են պատմականորեն իրենց գոյության ժամանակաշրջանում և այդ առումով ավելի կայուն են տնտեսական տարածության մեջ, օժտված են առավել օպտիմալ կառուցվածքով, իրենց տարածքներում տնտեսավարման շուկայական կառուցակարգերի խրախուսման պրակտիկայի հետ մեկտեղ՝ ունեն այդ գործընթացների կարգավորման քաղաքականության նշանակալից փորձ:

Տարածքային կայուն զարգացման պահանջը առաջ է բերում տնտեսական կայունության տեսության և մեթոդաբանության մշակման և տարածքային կայուն զարգացման այն չափանիշների և ցուցանիշների համակարգի հիմնավորումը, որոնք թույլ են տալիս գնահատել նրա կայունության աստիճանը: Որպես այդպիսի

չափանիշներ աշխատանքում դիտարկվել են. տնտեսության զարգացման մակարդակը, աճի տեմպերը, կառուցվածքը, բնակչության կյանքի որակը և անվտանգությունը, սոցիալական կայունությունը և հավասարակշռվածությունը, կայուն բնապահպանական հավասարակշռությունը:

Տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացման կառավարման համաշխարհային փորձի ուսումնասիրությունը աշխատանքում դիտարկվել է հետևյալ ասպեկտներով. 1) տարածքային զարգացման կարգավորման գործում պետության գործառույթները, 2) ինստիտուցիոնալ հիմքերը, 3) իրավական հիմքերը, 4) տնտեսական կարգավորման մեխանիզմները, 5) հատուկ տարածաշրջանային ձևերը (գոտիներ): Ընդհանրացնելով մի շարք զարգացած և զարգացող երկրներում տարածքային զարգացման փորձի վերլուծության արդյունքները՝ աշխատանքում կատարվել են որոշակի եզրահանգումներ՝ դրանք ՀՀ-ում տեղայնացնելու առումով:

Աշխատանքի երկրորդ՝ **«ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման արդի վիճակը և հիմնախնդիրները»** գլխում վերլուծվել և գնահատվել են ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամամասնություններն ու մասշտաբները, բացահայտվել են առաջացման պատճառները, ներկայացվել են ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն զարգացման հիմնախնդիրներն ու բարելավման ուղիները:

Տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների անհավասարությունները, որպես կանոն, բնութագրվում են դրանց տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշներով և աղքատության մակարդակով: ՀՀ տարածքային զարգացման մակարդակների անհամաչափությունների իրավիճակի ամբողջական պատկերը ներկայացնելու նպատակով աշխատանքում վերլուծությունները կատարվել են համադրելով Երևանի և մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակները բնութագրող համապատասխան ցուցանիշները:

Ուսումնասիրությունները վկայում են, որ տարածքային զարգացման անհամաչափություններն առկա են և՛ արդյունաբերության և՛ գյուղատնտեսության և՛ շինարարության և՛ ծառայությունների ոլորտներում: Միայն արդյունաբերության կտրվածքով, 2015 թ. հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի 42%-ը բաժին է ընկնում Երևանին, իսկ տասը մարզերը միասին վերցրած

ունեն ընդամենը 58% մասնաբաժին: Ընդ որում արտադրության ծավալների 58%-ի մեջ չորս մարզեր (Սյունիք, Արարատ, Կոտայք, Լոռի) ունեն շուրջ 45% բաժին, իսկ մնացած հինգ մարզերի բաժինը կազմում է 13%¹:

Հանրապետության «ամենագյուղատնտեսական մարզեր» շարունակում են մնալ Գեղարքունիքի, Արմավիրի և Արարատի մարզերը, որոնց գյուղատնտեսական համախառն արտադրանքի տեսակարար կշիռը 2015 թ. կազմել է համապատասխանաբար 19%, 18% և 13,5%: Իսկ ամենափոքր գյուղատնտեսական համախառն արտադրանքի մասնաբաժին ունեն (առանց Երևանի) Տավուշի և Վայոց ձորի մարզերը՝ 4,6% և 2,1% մասնաբաժիններով համապատասխանաբար: Խիստ անհամաչափ են բաշխված նաև ցանքատարածությունները:

Շինարարության ծավալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզերի դիրքերը չունեն որևէ օրինաչափություն, բացառությամբ Երևանի, որը գրեթե միշտ առաջատար դիրքերում է: 2015 թ.-ին կատարված շինարարական աշխատանքների ծավալի 63.1%-ը բաժին է հասել Երևանին, իսկ մնացած 36.9% ծավալի աշխատանքները կատարվել են հանրապետության տասը մարզերում միասին վերցված:

Նման անհամաչափության պայմաններում տարածքները զարգանում են մեկուսացած՝ համագործակցության մեջ չմտնելով այլ մարզերի հետ, որն էլ իր հերթին ևս մեկ գործոն է խոչնդոտելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշներում անհամաչափությունների հաղթահարմանը:

Տարածքային անհամաչափությունները բնութագրող ցուցանիշներից ամենամեծ շեղումները Երևանի և մարզերի միջև, թերևս, բնակչությանը մատուցվող ծառայություններն են: 2015 թ. բնակչությանը մատուցվող ծառայությունների 82.2%-ը բաժին է ընկել Երևանին, իսկ մնացած 17.8%-ը հանրապետության տասը մարզերին: Ճիշտ է ՀՀ մարզերում մշակույթի, գվարճությունների և հանգստի ոլորտի ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը 2010-2015 թթ. ընթացքում մի փոքր ավելացել է, Երևան/մարզեր հարաբերակցությունը 79.6/20.4-ից դարձել է 74.9/25.1, իսկ կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում՝ 87.7/12.3

¹ Այստեղ և հետագա ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին հրապարակման, 2015 թ. վիճակագրական տարեգրքի, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015 թ. հրապարակումների հիման վրա:

հարաբերակցությունը դարձել է 85.2/14.8, սակայն այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը և առողջապահությունը, ունենք հակառակ պատկերը: Կրթության ոլորտի ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը 2010 թ.-ին Երևան/մարզեր 86.5/13.5 հարաբերակցությունը 2015 թ.-ին հասել է 88.5/11.5, իսկ առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ծառայություններից օգտվելու 72.9/27.1 հարաբերակցությունը փոխվել է ի օգուտ Երևանի՝ 2015 թ.-ին հասնելով 86/14:

Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր երկրներում որպես տնտեսական զարգացման մակարդակի գնահատման հիմնական ցուցանիշ ընդունված է համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) մեկ շնչի հաշվով, որն ավելի ճիշտ է բնութագրում ինչպես տվյալ երկրի, այնպես էլ երկրի տարածքային կազմավորումներում սոցիալ-տնտեսական վիճակը:

Հաշվի առնելով, որ ՀՀ տարածքային կտրվածքով (մարզ, համայնք) համախառն ներքին արդյունքներ չեն հաշվարկվում և հիմք ընդունելով «ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգում» Երևանի և մարզերի ՀՆԱ-ների փորձագիտական գնահատումները որպես տարածքային համախառն ներքին արդյունքի մեծությունը մոտարկող ցուցանիշ՝ աշխատանքում դիտարկվել են արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ցուցանիշների հանրագումարը: ՀՀ տարածքային համախառն ներքին արդյունքների 2010-2015 թթ. փորձագիտական գնահատականների վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացվածության ամենաբարձր մակարդակը շարունակում է պահպանվել Երևանում, որն ապահովել է երկրի ՀՆԱ-ի 46%-ը:

Ատենախոսության շրջանակներում կատարված փորձագիտական գնահատականների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տարածքային անհամաչափություններն ակներև են (աղյուսակ 1):

Տնտեսական զարգացումը հիմնականում կենտրոնացած է Սյունիքի մարզում և Երևանում: Միայն այս երկու տարածքային կազմավորումներում են մեկ շնչի ՀՆԱ-ի ցուցանիշները գերազանցում միջին հանրապետականը՝ 56%-ով Սյունիքի մարզում և 29%-ով Երևանում: Մնացած մարզերում այդ ցուցանիշը ցածր է միջին հանրապետականից: Ընդ որում ամենաանբարենպաստ վիճակում են Տավուշի և

Շիրակի մարզերը, որոնց շնչային ՀՆԱ-ի ցուցանիշը կազմում է միջին հանրապետականի 51 և 57 տոկոսները համապատասխանաբար, մյուս մարզերում այդ ցուցանիշը տատանվում է 77-ից մինչև 94 տոկոսների միջև:

Աղյուսակ 1. Բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի (ընթացիկ գներով դրամ)²


	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
ք. Երևան	1319.6	1365.1	1467.0	1542.4	1640.0	1707.9
Արագածոտն	871.3	917.3	1001.5	1031.7	1150.8	1167.2
Արարատ	822.2	959.7	958.3	1112.0	1188.4	1244.5
Արմավիր	638.4	794.5	826.7	820.7	950.2	1024.4
Գեղարքունիք	677.2	864.5	861.2	897.5	997.9	1026.7
Լոռի	581.1	717.7	715.8	848.4	999.6	1040.6
Կոտայք	624.2	858.2	1056.8	1125.0	1139.2	1193.0
Շիրակ	562.9	719.6	729.8	749.5	776.8	759.9
Սյունիք	1678.4	1929.5	205.4	2166.0	2124.8	2066.7
Վայոց ձոր	566.0	645.0	710.7	843.3	1116.7	1066.9
Տավուշ	433.1	575.4	718.6	675.5	747.4	670.1
Ընդամենը	942.6	1054.5	1127.7	1195.8	1283.3	1325.3

Տարածքային զարգացման մակարդակների այսպիսի անհամաչափության միտումները պայմանավորել են բնակչության կենսապայմանների անհամաչափությունները: Ընդ որում, անհամաչափություններն ակնառու են, հատկապես, երբ համեմատություններ են անցկացվում քաղաքային և գյուղական բնակչության կենսամակարդակները բնութագրող ցուցանիշների միջև, ինչպիսիք են կրթական հաստատությունների և առողջապահական ծառայությունների մատչելիությունը, բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը, աղբահանության ծառայության մատուցումը և այլն: Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակները բնութագրող վերոնշյալ ցուցանիշները, ինչպես նաև դրանց փոփոխությունների միտումները, պայմանավորում են համայնքների ֆինանսական հնարավորությունների խիստ տարբերությունները, որոնք հատկապես դրսևորվում են համայնքային սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ձևավորման ու պահպանման, համայնքային ծառայությունների մատուցման հնարավորությունների անհամաչափություններում:

²Աղյուսակը կազմված է ՀՀ ԱՎԾ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հրապարակումների և 2015 թ. վիճակագրական տարեգրքի հիման վրա:

Աշխատանքի շրջանակներում կատարած ՀՀ համայնքների բյուջեների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների բյուջեների մոտ 70%-ը համալրվում է պաշտոնական լրավճարներից, սուբվենցիաներից, ինչը վկայում է համայնքների մեծ չափով կախվածությունը պետության կողմից հատկացվող տրանսֆերտներից (գծ. 1):

Գծապատկեր 1 ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր և սեփական եկամուտները (հազ. դրամ)³



Ընդհանրացնելով կատարված վերլուծությունները ատենախոսությունում արձանագրվում է, որ չնայած անցած 10-15 տարիներին հանրապետությունում զգալի աշխատանքներ են կատարվել տարածքային կազմավորումների անհամաչափությունների նվազեցման, համայնքների բյուջեների եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշների ավելացման ուղղությամբ, բայց և այնպես դեռևս զգալի ու անհանգստացնող են երկրի զարգացման համատեքստում տարածքային անհամաչափությունները: Տարածքային զարգացման պետական կառավարման վարչական և ինստիտուցիոնալ կառուցակարգերը մեծապես կորցրել են իրենց արդյունավետությունը, գործիքների օգտագործման համատեքստում հասել են համահարթեցման քաղաքականության արդյունավետության սահմանին: Այս ամենը նշանակում է, որ մինչ այժմ իրականացված համահարթեցման քաղաքականությունը չի բերել սպասվող արդյունքներին, և վկայում է գործող տարածքային քաղաքականության անկատարության և տարածքային քաղաքականության նոր տեսական պարադիգմայի,

³Գծանկարը կառուցված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական կայքէջի «Բյուջետային գործընթաց, ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ» <http://mtad.am/hy/budgetary-incomes/> տվյալների հիման վրա:

նրա իրականացման նոր սկզբունքների ու կառուցակարգերի մշակման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ տարածքային կայուն և համաչափ զարգացման կառավարման կատարելագործման ուղիները»** գլխում բացահայտվել են ՀՀ վարչատարածքային համակարգի առկա հիմնախնդիրները, ներկայացվել են բարեփոխումների համակողմանիորեն հիմնավորված կառուցակարգեր, առաջադրվել են տեղական ինքնակառավարման մարմինների ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիներ, կարևորվել է կլաստերների դերը տարածաշրջանի մրցունակության բարձրացման գործում, մշակվել են տարածաշրջաններում կլաստերների ստեղծման կազմակերպական-տնտեսական կառուցակարգեր: Այս բաժնում ներկայացվել են նաև տարածաշրջանի կայուն և համաչափ զարգացման ռազմավարական կառավարման համակարգի ձևավորման հայեցակարգային մոտեցումները, առաջադրվել են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության մշակման և իրականացման սկզբունքներն ու մեթոդները:

Աշխատանքում հիմնավորվում է այն տեսակետը, որ յուրաքանչյուր երկրի զարգացման մակարդակն ու հեռանկարները ամենից առաջ պայմանավորված են նրանով, թե որքանով են կատարյալ տվյալ պետության պետական (տարածքային) կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերը, ինչպիսին են նրանց միջև փոխհարաբերությունները: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս ժամանակակից իրողությունները, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում աստիճանաբար բարձրանում է տեղական ինքնակառավարման նշանակությունը:

Սակայն 1995 թ.-ի մեր հանրապետությունում անցկացված վարչատարածքային բաժանման արդյունքում առաջ եկավ խզում՝ համայնքների, կարելի է ասել ձևականորեն «կցված» գործառույթների և նրանց իրականացման իրական հնարավորությունների միջև: Այդ խզման պատճառները համայնքների ամենևին ոչ բավարար տնտեսական ինքնուրունության, ֆինանսական հնարավորության, միջտարածքային և ներտարածքային միավորների միջև, այդ թվում համայնք-մարզ, համայնք-համայնք, համայնք-ձեռնարկություն հարաբերությունների առկա, անկատար վիճակն է:

Հաշվի առնելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում առկա թերությունները, մասնավորապես փոքր համայնքերի առկայությունը և նրանցում ինքնակառավարման անարդյունավետությունը, հիմք ընդունելով գրականության մեջ արտահայտված տեսակետը ՀՀ տարածքային կառավարման համակարգի բարեփոխումների ուղղությամբ⁴, ինչպես նաև ՀԽՍՀ վարչատարածքային բաժանման ոչ լիարժեք համակարգը, կարևորելով համայնքների խոշորացման անհրաժեշտությունը, ատենախոսությունում առաջարկվում է ստեղծել շրջաններ կամ գավառներ մարզերի փոխարեն, իսկ տարածքային կառավարումն իրականացնել տեղական ինքնակառավարման երկմակարդակ համակարգով: Ըստ այդմ, առաջարկվում է, որպես տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակ, ձևավորել շրջաններ և հատուկ գոտիներ՝ ընտրովի ավագանիով և շրջանի ղեկավարով և երեք որևէ շրջանի կազմի մեջ չմտնող խոշոր քաղաքային համայնքներ (Երևան, Գյումրի, Վանաձոր), որոնցում տեղական ինքնակառավարումը կիրականացվի վերոնշյալ քաղաքային համայնքների մասին համապատասխան օրենքներով: Շրջանի կազմի մեջ մտնող համայնքները (քաղաքային, գյուղական) կձևավորեն տեղական ինքնակառավարման առաջին աստիճանը:

Աշխատանքում հիմնավորվել է, որ վարչատարածքային նման բաժանման իրականացումը կնպաստի շրջանների կայուն տնտեսական բազայի ստեղծմանը և ընդլայնմանը: Ֆինանսական հնարավորությունների բարելավման հետ միասին էապես կավելանան նաև շրջանների, ռեսուրսային ներուժի հնարավորությունները՝ գյուղատնտեսական հողատարածքներ, բնական պաշարներ, որակյալ աշխատուժ, որոնց հիման վրա կարելի է նախանշել շրջանի հետագա տնտեսական զարգացման ուղղությունը: Այնուհետև ատենախոսությունում առաջարկվել է կառավարման տնտեսակազմակերպչական և իրավական մեթոդների համալիր, որոնց օգտագործումը կնպաստի տեղական բյուջեի ներքին աղբյուրների ավելացմանը, և որպես հետևանք, տարածաշրջանների մրցունակության և կայուն սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման մեջ տեղական ինքնակառավարման ինստիտուտի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

⁴ Սուվարյան Յու.Մ., Չոբանյան Մ.Խ. «Տնտեսության տարածքային կառավարում. մեթոդաբանությունը և հիմնախնդիրները» Եր. ԱՌՏ, 2007թ., էջ 104-110:

Ատենախոսությունում հիմնավորվել է, որ գիտության և կրթության զարգացման և տնտեսության մեջ նորամուծական գործընթացների խրախուսման ճանապարհով դինամիկ, կայուն տնտեսական աճի, երկրի ու նրա տարածաշրջանների մրցունակության բարձրացման հիման վրա բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության նվազեցման խնդիրների լուծման լավագույն մոտեցումներից է կլաստերների ձևավորումն ու զարգացումը: Աշխատանքում առաջարկվում է կլաստերների ձևավորման գործընթացը իրականացնել երեք հիմնական փուլերով: Սկզբունքային կարևոր նշանակություն ունի առաջին փուլը՝ նախնականը, որում որոշվում է ձևավորվող կլաստերի ներուժը և մշակվում է կլաստերային նախագծերի իրականացման ծրագիրը: Երկրորդ փուլի խնդիրն է տարածաշրջանում կլաստերների ձևավորման գործընթացների ակտիվացումը, այդ գործընթացների մեջ հնարավոր մասնակիցների ընդգրկումը: Այդ փուլի արդյունքն է ծրագրի իրականացումը՝ տարածաշրջանում կլաստերների ստեղծումը: Եզրափակիչ փուլում կատարվում է տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների հիման վրա կլաստերների գործունեության գնահատում, որի հիման վրա կարող են կատարվել կլաստերների զարգացման ծրագրերի ճշգրտումներ, նրանց գործունեության մեջ անհրաժեշտ փոփոխություններ:

Ատենախոսությունում հիմնավորելով տարածքային կառավարման համակարգում ռազմավարական կառավարման նշանակությունը՝ հանգամանորեն ներկայացված է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության մշակման և իրականացման կառուցակարգը, որի հիմքում ընկած է ռազմավարության ընտրության իրականացման նպատակով սոցիալ-տնտեսական գործընթացների վրա իշխանության պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածաշրջանների ձեռնարկատիրական կառույցների, նրանց միավորումների, գիտական, հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և բնակչության ներկայացուցիչների կողմից նպատակաուղղված կառավարչական ներգործության սկզբունքների, ձևերի, մեթոդների և գործիքների ամբողջությունը:

Եզրակացություններ բաժնում հակիրճ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, արվել են համապատասխան եզրահանգումներ, որոնք հիմք են հանդիսացել մի շարք առաջարկությունների համար.

- Յուրաքանչյուր երկրի կառավարման կենտրոնական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կարևորագույն և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից է տարածքային զարգացման արդյունավետ ուղղությունների ընտրությունը և տարածքային կազմավորումների զարգացման անհամաչափությունների նվազեցումը:
- Անհամաչափ տարածքային զարգացման գործընթացը կարելի է բնութագրել տարածքային միավորների այնպիսի վիճակով, որն արտահայտվում է երկրի միջին ցուցանիշների նկատմամբ տնտեսական, սոցիալական, բնապահպանական զարգացման մակարդակների էական տարբերություններով, ինչը տարածքի զարգացումը դարձնում է անկայուն, որը դրսևորվում է տարածքի որպես համակարգի տարրերի աններդաշնակ զարգացմամբ և որը վերջնական հաշվով հանգեցնում է տարածքի համախառն ներուժի մակարդակի և սոցիալ-տնտեսական արդյունավետության նվազեցմանը:
- Տարածաշրջանի կայուն զարգացումը համալիր գործընթաց է, որի արդյունքում լուծվում են տարածաշրջանային մակարդակով բնակչության հիմնախնդիրները, սոցիալ-տնտեսական և բնապահպանական զարգացման հաշվեկշռվածությանը հասնելու ճանապարհով բարելավվում են տարածաշրջանի բնակչության կենսապայմանները, որն իրականացվում է տարածաշրջանի ողջ ռեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման հիման վրա, ներառյալ տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկությունները, ինչպես նաև տնտեսության, ենթակառուցվածքների և տվյալ տարածքային կազմավորումների պոտենցիալ հնարավորությունների առանձնահատկությունները:
- Տարածքային զարգացման քաղաքականության և դրանում պետության մասնակցության նոր միտում է տեխնո-ներդրումային գոտիների՝ տեխնոպոլիսների և տեխնոպարկերի՝ վարչատարածքային կազմավորումներից սկզբունքորեն տարբերվող տարածքային գիտատեխնիկական կազմավորումների առաջացումը և հետագա հզորացումը:

- ՀՀ տարածքային կառավարման ժամանակակից քաղաքականությունը պետք է տարբերակվի և հենվի նրանց աշխարհագրական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների և զարգացման միտումների իմացության վրա: Այն տարածքները, որոնք կհամարվեն «հեռանկարային», շեշտադրումը պետք է կատարվի բիզնեսի խրախուսման, կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծման, ներդրումների ներհոսքի և կայուն աճի վրա, իսկ այն շրջանները որոնք կճանաչվեն «անհեռանկարային», տարածքային քաղաքականության հիմքում պետք է լինի տարածքային կազմավորումներում բնակչությանն օգնելը, պատմամշակութային լանդշաֆտների պահպանումը, տեղական ինքնակառավարման ինստիտուտի ամրապնդումը:
- Հաշվի առնելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում առկա թերությունները, կարևորելով համայնքների խոշորացման անհրաժեշտությունը, ատենախոսությունում առաջարկվում է ստեղծել շրջաններ կամ գավառներ մարզերի փոխարեն, իսկ տարածքային կառավարումն իրականացնել տեղական ինքնակառավարման երկմակարդակ համակարգով:
- Երկրի ու նրա տարածաշրջանների մրցունակության բարձրացման, դինամիկ և կայուն տնտեսական աճի հիման վրա բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության նվազեցման խնդիրների լուծման մոտեցումներից է կլաստերների ձևավորումն ու զարգացումը: Աշխատանքում հիմնավորվել է արդյունաբերական կլաստերների ձևավորման նպատակահարմարությունը Ալավերդու, Արարատի, Ղափանի, Հրազդանի շրջաններում, գյուղատնտեսական կլաստերներ՝ Արմավիրի, Ապարանի, Ախուրյանի Արարատի, Էջմիածնի և Սևանա լճի հարակից շրջաններում, զբոսաշրջային կլաստերներ՝ Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզերում, ինչպես նաև Աշտարակի շրջանում:
- ՀՀ շրջաններում կլաստերների կայացման ու զարգացման անհրաժեշտ պայման է կլաստերային գործունեության մասին օրենսդրության ընդունումը, որով կկարգավորվեն կլաստերի անդամների հարաբերությունները, կսահմանվեն կլաստերը, կլաստերի կազմակերպահրավական տեսակը, գործունեության ոլորտը, նպատակները, խնդիրները, մասնակիցների կազմը, նրանց պարտավորություններն

ու իրավունքները, փոխհարաբերությունների կարգավորումը, կառավարող մարմնի գործառույթները և այլն:

- Ատենախոսությունում տարածքային կառավարման համակարգում կարևորվել է ռազմավարական կառավարումը որպես տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին արագ արձագանքելու հնարավորություն: Կախված նրանից թե որքանով են ճիշտ ախտորոշվել և ձևակերպվել ռազմավարական խնդիրները, որքանով ռացիոնալ են օգտագործվում դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները և որքանով են հետևողական իրականացվում պլանավորվող միջոցառումները, կախված է տարածքային սոցիալ-տնտեսական համակարգի կայունությունը և, որպես հետևանք՝ բնակչության բարեկեցությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ասլանյան Ս.Գ., Տարածքային կայուն զարգացումը որպես տնտեսական քաղաքականության կարեվոր ուղղություն// ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2015 էջ 42-46:
2. Ասլանյան Ս.Գ., Տարածքային կազմավորումների կայուն զարգացման հիմնախնդիրները// «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես Եր., 2016 #3-4 (187-188) էջ 17-19:
3. Ասլանյան Ս.Գ., ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները եվ դրանց լուծման ուղիները կայուն զարգացման համատեքստում// «ԲԱՆԲԵՐ» Եր., 2016.4 էջ 53-63:
4. Ասլանյան Ս.Գ., Ռազմավարական կառավարման մոտեցումները ՀՀ տարածքային կայուն և համաչափ զարգացման ապահովման գործընթացներում// «Այլընտրանք» հանդես Եր., 2016 հոկտեմբեր-դեկտեմբեր էջ 77-87:
5. Ասլանյան Ս.Գ., Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում// «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես Եր., 2016 #9-10 (193-194), էջ 114-116:

6. Ասլանյան Ա.Գ., Տարածքային սոցիալ-տնտեսական համակարգերի կայուն զարգացման նշանակությունը և տեսամեթոդաբանական խնդիրները// «Հանրային կառավարում» հանդես Եր., 2016/3 էջ 71-79:

АСЛАНЯН СЕРГЕЙ ГАГИКОВИЧ
ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО И РАВНОМЕРНОГО РАЗВИТИЯ
ТЕРРИТОРИАЛЬНЫХ ОБРАЗОВАНИЙ (ПО МАТЕРИАЛАМ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – "Экономика, управление хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 30-го марта 2017г., в 15:30 часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу:
0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Цель и задачи диссертации. Цель исследования – выявление проблем устойчивого и равномерного развития социально-экономических систем территориальных образований Республики Армения и выдвижение путей и подходов к их практическому решению – с теоретико-методическим обоснованием. Для достижения вышеуказанной цели в работе поставлены и решены следующие задачи:

- Уяснить содержание понятий “территория”, “территориальное образование” и “равномерное территориальное развитие”.
- Выявить и классифицировать сущность, формы реализации, принципы и методы территориальной политики.
- Обосновать значение, раскрыть сущность, направления и инструменты государственной политики в деле устойчивого и равномерного развития регионов.
- Исследовать международный опыт устойчивого и равномерного развития регионов и возможность его применения в РА.
- Анализировать и оценить диспропорции и масштабы социально-экономического развития регионов РА, выявить причины возникновения, представить предложения с целью их преодоления.

- Исследовать теоретико-методологические основы устойчивого развития социально-экономических систем, сущность и особенности устойчивого регионального развития, выявить проблемы устойчивого регионального развития РА.
- Выдвигать подходы к преодолению социально-экономических диспропорций и к устойчивому развитию территориальных образований РА.
- Обосновав значимость института местного самоуправления в процессе регионального устойчивого и пропорционального социально-экономического развития, разработать пути повышения эффективности использования их потенциала.
- В контексте усовершенствования системы управления региональным устойчивым и пропорциональным развитием предложить регламент разработки и реализации стратегии социально-экономического устойчивого и пропорционального развития региона.

Научные результаты и новизна диссертации:

- Уточнены и определены критерии выявления диспропорций территориального развития и в соответствии с ними представлена система показателей, характеризующих различия в уровнях социально-экономического развития.
- Подчеркнув значимость местного самоуправления в деле социально-экономического развития регионов, предложена новая концепция административно-территориальных реформ, направленная на повышение эффективности использования потенциала муниципалитетов.
- Обосновав роль кластеров в деле развития и повышения конкурентоспособности регионов, разработаны организационно-экономические основы и алгоритм формирования и развития кластеров в регионах РА.
- Предложен весь процесс разработки, принятия и обеспечения реализации стратегии социально-экономического развития территориальных образований – начиная с анализа стартовых условий и до организации и оценки контроля реализации, включая мониторинг процессов независимыми аналитическими организациями.

ASLANYAN SERGEY GAGIK
THE ISSUES OF SUSTAINABLE AND BALANCED DEVELOPMENT OF TERRITORIAL
DIVISIONS
(ON THE MATERIALS OF RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02.-“Economics, Management of the Economy and its Spheres” The defense of the thesis will take place on March 30, 2017, at 15³⁰ o'clock at 014 Council of Economics of the SCC at Armenian State University of Economics 128 M.Nalbandyan str., Yerevan 0025.

The objective of the study is to reveal the problems of sustainable and balanced development of socio-economic systems in territorial divisions of RA and to submit suggestions for solution thereof with theoretical-methodological grounds. To achieve this objective, the following issues have been highlighted and solved in this study.

- To clarify the meaning and essence of "territory", "territorial division" and "territorial balanced development".
- To identify and classify the essence of regional policy, implementation of the forms, principles and methods.
- To ground the importance of state regional policy for sustainable and balanced development in regions, to reveal the essence, methods and tools of the state regional policy of sustainable and balanced development at socio-economic levels.
- To explore the territorial sustainable and balanced development international experience and its applicability possibilities in RA.
- To analyze and evaluate the socio-economic development scales and imbalances in regions of RA, to identify the causes and make recommendations to overcome them.
- To explore the theoretical-methodological basics of sustainable development of socio-economic systems, the nature and characteristics of territorial sustainable development, to identify the territorial socio-economic sustainable development issues in RA.
- To suggest the approaches to overcome socio-economic disbalances and to improve sustainable development in the territorial division of RA.

- To support effective useage of current potential by highlighting the role of municipal government institute in territorial sustainable and balanced socio-economic development process.
- To develop the mechanism along with its application for the regional socio-economic sustainable and balanced development strategy in the context of improved management of sustainable and balanced development system.

During the study a number of theoretical-methodological results and findings of practical significance were obtained, out of which the ones that contain scientific novelty are as follows:

- In the thesis have been clarified and defined territorial development disparities detection standards and in accordance with that has been presented a system of indicators characterizing the differences in socio-economic development.
- A new concept of administrative reform aimed at efficient use of community resources has been suggested by highlighting the role of local government in regional socio-economic development.
- In the thesis have been processed organizational, economic fundamentals and stages of the formation and development of clusters in regions of RA by grounding the role of clusters in the development and rising of competitiveness in regions.
- The process of elaboration, adoption and implementation of the socio-economic development strategy of territorial divisions have been developed from the analyses of the initial conditions to organization and evaluation of application control including monitoring processes by independent monitoring organizations.